

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԱԶԴ

Բարեյիշատակ Յովսէփ Խղմիրեանցի կտակին տրամադրութեան համաձայն՝ Սահակ - Մեսրոպեան գրական մրցանակաբաշխութիւնն տեղի պիտի ունենայ յառաջիկայ տարի յաւուր տօնի Սուրբ Թարգմանչացն Սահակայ և Մեսրոպայ:

Հետեապէս՝ այն ամեն հեղինակք ու բանասէրք, որ ազգային դպրութեան և պատմութեան վերաբերեալ է և է երկասիրութեամբ կը փափաքին մասնակցիլ այս մրցանակաբաշխութեան, կը հրաւիրուին մինչև յառաջիկայ տարուայ Յունվարի սկիզբն յուղարկել առ Ըմեն. Արքազան Պատրիարք Հայրն ԻՎ. Պօլեա իրենց աշխատասիրութիւններն:

Տպագրեալ երկասիրութիւնք երեք օրինակ պէտք է յուղարկուին. իսկ ձեռագիրք մի օրինակ՝ որք ետ չեն տրուիր:

25 Յունիս 1893:

Քաղաքայ Մարգարտիրական Ընկերութեան, ընդհանուր Ժողովը ներկայ 1893 թ. համար նշանակել է 600 ռ. նպաստ այն անձանց, որոնք կկամենան յընթացս մ'ի տարուայ վերջնական քննութիւն տալ՝ ուսուցչական իրաւունք ձեռք բերելու համար: Յանկացողները թող դիմեն Բազու հետեւեալ հասցէով. — Въ Совѣтъ Бакинскаго Армянскаго Человѣколюбиваго Общества. Խնդրատուների մէջ Խորհուրդը գերադասելու է նոցա, որոնք սւարտած են Թեմական դպրանոցը կամ Գէորգեան ճեմարանը:

Նախագահ Խորհրդի Բ. ԴՈԼՈՒՒԱՆԵԱՆՑ.

Ատենագիր Ա. ԳԱԼՍՏԵԱՆՑ.